ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԼԻ Է ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ

ԿԵՆՏՐՈՆԱՑՈՒՄ.

Աստված ողջ Աստվածաշնչով մեկ օգտագործում է խորհրդապատկերներ, որպեսզի մեզ ավելի մեծ հայտնություններ և հասկացողություն տա Իր ճանապարհների մասին:

ԲԱՆԱԼԻ ՀԱՄԱՐՆԵՐ. ՄԱՐԿՈՍ 4.2, ՍԱՂՄՈՍ 105.40

1. ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԼԻ Է ՀՈԳԵՈՐ ԽՈՐՀՐԴԱՊԱՏԿԵՐՆԵՐՈՎ:

Սաղ. 78:2 - 2 Ես առակով կբանամ բերանս, դուրս կբղխեմ խորին բաներ հին ժամանակից:

- Աստված խորհրդապատկերներ է օգտագործում Ինքն Իրեն Իր ժողովրդին հայտնելու համար:

Մար. 4:2 - 2 Եւ շատ բաներ էր սովորեցնում նորանց առակներով. Եւ իր վարդապետութեան մէջ ասում էր նորանց.

Սաղ. 105:40-41 - 40 Խնդրեցին և Տերը լորամարգիներ ուղարկեց. և երկնային հացով կշտացրեց նորանց: 41 Ժայռը ճեղքեց, և ջուր բղխեց ու գետեր գնացին անջուր տեղերում:

- Աստվածաշունչը լի է հոգևոր խորհրդապատկերներով: Սա կարևոր է, քանի որ Աստվածաշունչը հոգևոր գիրք է՝ գրված հոգևոր անձնավորության կողմից և տրված հոգևոր անձնավորությունների:

Ղուկ. 10:17-20 - 17 Եւ այն եօթանասուներկուսը վերադարձան ուրախութիւնով և ասեացին Հիսուսին, Տէր, դեւերն էլ հնազանդվում են մեզ քո անունով: 18 Եւ նորանց ասեց. Տեսնում էի սատանային, որ կայծակի պէս երկնքից վայր էր ընկնում: 19 Ահա ձեզ իշխանութիւն տվեցի, կոխել օձերի և կարիճների վրա և թշնամու բոլոր զօրութեան վրա, և ձեզ ոչինչ չի վնասի: 20 Սակայն մի ուրախացեք՝ նորա համար որ ոգիները ձեզ հնազանդվում են, բայց առավել ուրախացէք, որ ձեր անունները գրված են երկնքում:

Ղուկ. 10:21 - 21 Նույն ժամին Հիսուսը Հոգով ցնծաց և ասեց. Գոհանում եմ քեզանից, Հայր, երկնքի և երկրի Տէր, որ իմաստուններից և գիտուններից այս ԲԱՆԵՐը (առակները, խորհուրդները) ծածկեցիր և մանուկների հայտնեցիր: Այո, ով Հայր. Որովհետև այսպէս հաճելի եղավ քո առաջին:

- Աստվածաշունչը հասկանալի լինելու համար այն պետք է կարդաս իր ամբողջական կոնտեքստը:

Ծնն. 3:1 - 1 Եւ օձը ավելի խորամանգ էր քան թէ դաշտի բոլոր գազանները, որ Եհովա Աստուածն ստեղծել էր. Եւ կնոջն ասեց. Իրա՞ւ Աստուած ասեց, որ Պարտէզի ոչ մի ծառից չուտէք:

Հայ. 12:9 - 9 Եւ վայր գցվեց մեծ վիշապը՝ այն ԱՌԱՋԻ ՕՁը, որ Բանսարկու և սատանա է կոչվում, այն բովանդակ աշխարհը մոլորեցնողը վայր գցվեց երկրի վրա և իր հրեշտակներն էլ իր հետ վայր գցվեցին:

*Հայ. **9:3-4** - 3 Եւ ծխի միջից երկրի վրա դուրս եկան մորեխներ. և նորանց իշխանություն տրվեց ինչպէս որ երկրի ԿԱՐԻՃՆԵՐՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆ ունեն: 4 Եւ նորանց ասվեց, որ ԵՐԿՐԻ ԽՈՏԻՆ վնաս չ'տան, և ոչ մի խոտի, և ՈՉ ՄԻ ԾԱՌԻ, բայց միայն այն մարդկանց, որ Աստուծո կնիքը չ'ունեն իրենց ճակատների վրա:*

*Սաղ. **1:3** - 3 Եւ նա հոսող ջրերի մոտ տնկված ծառերի պէս է, որ իր պտուղը տալիս է իր ճիշտ ժամանակին, և նորա տերևը չէ թափվում, և ամեն ինչ որ անում է հաջողվում է նորան:*

- Աստծո մարդիկ ամենաապահովն այն ժամանակ են, երբ մտածում են Աստծո Խոսքի վրա: Երբ նրանք մտածում են Խոսքի վրա, նրանք նմանվում են ջրի վտակների մոտ տնկված ծառեր: Հիսուսն է կենդանի ջուրը:

- Ա՞րդյոք դու ունես Սուրբ Հոգու կնիքը քեզ վրա:

*Եփ. **1:13** - 13 Որ նորանում և դուք յուսացաք, Դուք էլ, երբ լսեցիք՝ ճշմարտության խօսքը, այսինքն ավետարանը, որ փրկություն բերեց ձեզ, հավատացիք՝ Քրիստոսին և կնքվեցիք խոստացված Սուրբ Հոգով: 14 Եվ Սուրբ Հոգին գրավական է, որ ժառանգելու ենք Աստծո խոստումը, երբ Աստված փէկի իր սեփական ժողովրդին, որպեսզի գովերգենք Նրա փառքը:*

2. ՄԵՆՔ – Ոչխարները թշնամի ունեն:

- **Աստված ուզում է, որ մենք իմանանք, որ թշնամի ունենք:**

*Եզ. **34:1-2** - 1 Եւ Տիրոջ խօսքը եղավ ինձ ասելով. 2 Մարդու որդի, մարգարէացիր Իսրայէլի հովիվների մասին, մարգարէացիր և ասա նորանց՝ այդ հովիվներին. Թէ Այսպէս է ասում Տէր Եհովան. Վա՜յ Իսրայէլի հովիվներին, որոնք իրենց են արածեցնում. հովիվները չէ՞ որ հօտը պիտի արածեցնեն:*

Աստված Իր ժողովրդին կոչում է ոչխարներ: Հովիվները և առաջնորդները նրանց հոգաբարձուներն են: Մենք պետք է հասկանանք, որ Աստծո ժողովուրդը թշնամի ունի:

*Եզ. **34:5** - 5 Իմ հօտերը ցրվել են, քանի որ հովիվներ չունէին, և ԱՆԱՊԱՏԻ ԳԱԶԱՆՆԵՐԻՆ կեր են դարձել:*

Երբ Աստված խոսում է դաշտի գազանների մասին, Նա խոսում է հակառակորդի ու նրա դիվային ոգիների մասին: Աստված չի ուզում, որ մենք միամիտ լինենք հակառակորդի խարդավանքների հանդեպ: Նա ուզում է Աստվածաշնչի միջոցով մեզ իմաստություն տալ, որպեսզի մենք զորություն ունենանք՝ մեր թշնամիներին դիմակայելու համար:

- Ո՞վ էր Հիսուսի հետ անապատում 40 օր փորձության ժամանակ:

*Մար. **1:13** - 13 Եւ նա այնտեղ անապատում էր քառասուն օր սատանայից փորձվելով. Եւ գազանների հետ էր, և հրեշտակները ծառայում էին նորան:*

*Մար. **4:3-4** - 3 Լսեցէք. Ահա սերմ ցանողը դուրս գնաց սերմ ցանելու: 4 Սերմանելու ժամանակ սերմերից մի քանիսն ընկան ճանապարհի եզրին, և ԵՐԿՆՔԻ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ (1/3 դիվային բանակը) եկան ու կերան դրանք:*

*Մար. **4:13-15** - 13 Եւ նորանց ասեց. Դուք չհասկացա՞ք այս առակի իմաստը. Ապա ի՞նչպէս պիտի հասկանաք բոլոր առակների իմաստը: 14 Սերմանողը Աստծո Խօսքն է, որ սերմանում է. 15 Ճանապարհի եզրին գտնվող հողը պատկերն է այն մարդկանց, ուր բանը սերմանվում է, և երբոր լսում են, շուտով գալիս է սատանան և վեր առնում նորանց սրտերում սերմանված խօսքը:*

*2 Օր. **28:25-26** - 25 Տէրը թշնամիներիդ առջև քեզ պարտության կը մատնի. դու նրանց դէմ մէկ ճանապարհով կ՝ելնես, բայց եօթը ճանապարհով կը փախչես նրանցից. և երկրի բոլոր թագավորությունների մէջ թափառական կլինես. 26 Եւ քո մարմինը երկնքի բոլոր թռչուններին և երկրի գազաններին կերակուր կլինի. և քշող չի լինիլ:*

3. Այո, Մենք թշնամի ունենք: Բայց Աստված Ծրագիր Ունի:

- Աստված ուզում է, որ մենք իմանանք, որ Ինքը ծրագիր ունի մեր փրկության համար:

  *Դան. **4:10-14** - 10 Եւ Իմ անկողնում տեսնում էի, որ ահա կար Մի ԾԱՌ հողի մէջ, և նորա բարձրութիւնը մեծ էր: 11 Այն ծառը մեծանում էր և զօրանում, և նրա բարձրությունը հասավ մինչև երկինք, և նրա լայնությունը՝ աշխարհի բոլոր կողմերը: 12 Նրա տերևը գեղեցիկ էր, և նրա պտուղը՝ առատ. և բոլորի կերակուրը նրանից էր: ՎԱՅՐԻ ԳԱԶԱՆՆԵՐ ԷԻՆ ապրում նրա տակ, ճյուղերին հանգստանում էին երկնքի թռչունները, և նրանից էր կերակրվում ամէն մարմնավոր արարած: 13 Իմ անկողնում, գիշերային տեսիլքում տեսնում էի, և ահա մի պահապան և մի սուրբ իջավ երկնքից: 14 Խօսում էր բարձրաձայն և այսպէս ասում. Կտրեցէ՛ք այդ ծառը, հատեցէ՛ք նրա ճյուղերը, թօթափեցէ՛ք դրա տերևները, շա՛ղ տվէք դրա պտուղները, թող գազանները հեռանան նրա տակից, և թռչունները՝ նրա ճյուղերից: 15 Բայց նորա արմատի բունը թողեցէք երկրումը.*

  *Ես. **6:13** - 13 Սակայն սրանցից էլ մէկ տասներորդը կը պահպանվի, նա էլ դարձեալ ավերակ դառնա. ինչպէս որ բևեկնին ու կաղնին, որ կտրվելիս մի բուն է լինում նորանցում, նույնպէս այն սուրբ սերունդն է նորա բունը:*

- Աշխարհիկ եկեղեցու Խորհրդապատկերը:

  *Եզ. **31:6** - 6 Նորա ՃՅՈՒՂԵՐԻ ՎՐԱ բույն էին դնում երկնքի բոլոր թռչունները, և նորա ճյուղերի տակ ծնում էին դաշտի բոլոր գազանները, և նորա հովանում բնակվում էին բոլոր մեծամեծ ազգերը:*

  *Հով. **15:5** - 5 Ես որթն եմ՝ ԴՈՒՔ ՃՅՈՒՂԵՐԸ. նա որ ինձանում մնում է, և ես նորանում, նա շատ պտուղ է բերում. որովհետև առանց ինձ չէք կարող ոչինչ անել:*

- Հովհաննես 15:5-ում Հիսուսն ասում է, որ Ինքը խաղողի վազն է, իսկ մենք ճյուղերը: Մենք պետք է կապված լինենք Քրիստոս վազի հետ Աստծո Խոսքն ուսումնասիրելու և իմանալու միջոցով:

  *Հայ. **18:1-2** - 1 Եւ սորանից հետո տեսա մի հրեշտակ որ իջնում էր երկնքից. նա ուներ մեծ իշխանություն, և նրա փառքից երկիրը լուսավորվեց: 2 Հրեշտակը մեծ ձայնով աղաղակեց և ասեց. Ընկա՜վ, ընկա՜վ մեծ Բաբելոնը, և դարձավ դևերի բնակավայր և ամեն պիղծ հոգու արգելանոց, և ամեն անսուրբ և ատելի թռչունի վանդակ:*

ԱՄՓՈՓՈՒՄ

- Ա՞րդյոք հնարավոր է որ Քրիստոնիան դառնա անսուրբ և ատելի թռչունի վանդակ: Սատանան ետ է դառնում և ասում գնամ այնտեղ որտեղից դուրս եկա... և գալից ու տեսնում է տունը մաքուր և դատարկ...